



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«07» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 029 - 25

Նախաձեռնող՝

«Ն.Գ.Մ.Դ» ՍՊԸ

ք.Երևան, Կենտրոն վ/2, Սևանի փ., հ. 12,

Գործունեությունը՝

Կենտրոն վարչական շրջանի Սևանի փողոց հ. 12, հ.12/1, հ.12/6
հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի
համալիրի կառուցում

ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 029 - 25

«07» փետրվարի 2025թ.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սևանի փողոց հ. 12, հ.12/1, հ.12/6 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ն.Գ.Մ.Դ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան, Սևանի փողոց հ. 12, հ.12/1, հ.12/6 հասցեներ

Ներածական մաս. «Ն.Գ.Մ.Դ» ՍՊ ընկերությունը նախատեսում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սևանի փողոց հ. 12, հ.12/1, հ.12/6 հասցեներում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի շենք:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի համաձայն՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականները՝ № 22122021-01-0098 /ծածկագիրը՝ 01-006-0317-0064/, № 22122021-01-0193 /ծածկագիրը՝ 01-006-0317-0076/, № 22122021-01-0110 /ծածկագիրը՝ 01-006-0317-0075/, Երևանի համայնքապետարանի կողմից 30.10.2024թ. տրված № 01/50-01-4192-Ա նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասերի նպատակային նշանակությունները բնակելի կառուցապատման փոփոխելու համար առկա է Երևանի քաղաքապետի որոշումը:

Նկարագրական մաս. Բնակելի համալիրը նախատեսվում է իրականացնել 4 մասնաշենքերով՝ Ա, Բ, Գ և Դ: Ա մասնաշենքն ունի 3 ստորգետնյա / նիշ՝ -4.800, -8.400 և -12.000/ և 24 վերգետնյա հարկ, Բ մասնաշենքը՝ 2 ստորգետնյա / նիշ՝ -4.800, -8.400 / և 24 վերգետնյա հարկ, Գ մասնաշենքը՝ 2 ստորգետնյա / նիշ՝ -4.800, -8.400/ և 24 վերգետնյա հարկ, Դ մասնաշենքը՝ 2 ստորգետնյա / նիշ՝ -4.800, -8.400/ և 24 վերգետնյա հարկ:



/կայանատեղի/ 2 ստորգետնյա հարկ / նիշ՝ -4.800, -8.400/ (ընդհանուր շինարարական մակերեսը մոտ 178100 մ2): Ստորգետնյա հարկերը նախատեսված են մոտ 702 մեքենաների կայանման համար:

Շենքերի աստիճանավանդակների դռները նախատեսվում են իրականացնել հակահրդեհային և ինքնափակվող: Առաջին հարկի հատակի ծածկը առաջին տիպի հրակայունության աստիճանի է: Ա և Բ մասնաշենքերը 11, 18, և 23 հարկերում ըստ նախագծի միացված են կամուրջներով, որոնք կծառայեն որպես բնակարանների տերասաններ: Կառույցների տանիքները հարթ են՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ: Շենքերի տանիքներում նախատեսվում են ուղղաթիռային հարթակներ՝ հակահրդեհային նորմերի պահանջներին համապատասխան: Տանիքներում կան առանձին շինություններ՝ աստիճանավանդակային սենքեր: Նախատեսվող համալիրի համար նախատեսված հողամասը հյուսիսից հարում է նոր կառուցվող «Այգիներ» բնակելի համալիրին, հարավից՝ «Սուրմալու» առևտրի կենտրոնին, իսկ արևմուտքից՝ «ՍԱՍ» առևտրի կենտրոնին, արևելքից՝ Սևանի փողոցին: Սևանի փողոցից և Արշակունյաց պողոտայից նախատեսվում են հետիոտնային և մեքենայի մոտեցումներ:

Նախատեսվող բնակելի համալիրի կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներ են. Հողի ընդհանուր մակերես՝ 20201,52 քմ,

Կառույցի ընդհանուր շինարարական մակերեսը կազմում է 178100 քմ, Կառուցապատման մակերես – 7867,2 քմ

Կանաչապատման մակերես – 8161,9 քմ

Ճանապարհ, մայթ, – 4171,9 քմ,

Շենքի ստորգետնյա կառուցապատում՝ – 32127 քմ ,

Շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 60 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Հողամասերը ծանրաբեռնված են շինություններով, որոնք ենթակա են ապամոնտաժման, ինչի համար առկա է քանդման թույլտվություն: Քանդման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել պահպանելով անվտանգության նորմերը և նախագծով սահմանված կանոնները՝ ըստ հերթականության, առանց պայթեցման աշխատանքների: Քանդման աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբը անմիջապես անհրաժեշտ է տեղափոխել նախապես Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված աղբավայր: Շինարարական աղբի ծավալը կկազմի մոտ 35000մ3:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս կտնկվեն ծառեր և թփեր: Համաձայն հաշվետվության՝ տարածքում նախատեսվում է տնկել կաղնի շագանակատերև - 72 հատ, թխկի սրատերև - 12 հատ, կատալպա սովորական – 12 հատ, դրախտածառ – 22 հատ, արծաթափայլ եղևնի – 10 հատ, խենոմեխ – 26 հատ, ասպիրակ – 34 հատ, սիրիական վարդ (հիբիսկուս) – 16 հատ, գնդաձև սամշիթ – 50 հատ, ծաղկանոց (վարդեր) - 1400 հատ (240 մ2), սիզամարզ – 6060 մ2 Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար իրականացվելու են մոտ 150000 մ3 ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր, հանվող 100000 մ3 ծավալով հողաին զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի



կողմից սահմանված կարգով հատկացված վայր, իսկ մնացած մասը կարճաժամկետ կապահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էլեկտրական սնուցման համար տարածքում նախատեսվում է կառուցել նոր ենթակայան, որն աշխատալեռու է չոր եղանակով: Յուրաքանչյուր բնակարանի համար նախատեսված է արհեստական շրջանառությամբ, երկխողովականի ներքին մատակարարումով ջերմատարի փակուղային շարժումով ջեռուցման համակարգ: Մատակարարող խողովակները հորաններով բարձրանում են յուրաքանչյուր հարկում տեղադրված բաշխիչ հանգույց, որտեղից ջերմատարը ֆուգայապատ պոլիպրոպիլենե խողովակներով հատակի հաստության միջով բաշխվում է ջեռուցման սարքերին: Բոլոր մասնաշենքերում ջեռուցումն իրականացված է երկու գոտիով: Իսկ հասարակական հարկերի հովացումը իրականացվում է կաթսայատան տանիքում տեղադրված չիլլերներից:

Խմելու-տնտեսական և հակահրդեհային կարիքների համար նախատեսվում է հոր՝ մեկը հակահրդեհային հիդրանտով, իսկ մյուսը ջրաչափական հանգույցով՝ D=150մմ ջրաչափով: Տարածքի հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է 15լ/վրկ ջրի ծախս: Ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսված է իրականացնել պոլիէթիլենե Մ250 մմ, հորերում պողպատե էլեկտրաեռակցվող Մ250մմ տրամաչափի խողովակներից:

Շենքի քանդման աշխատանքներ սկսելուց առաջ անհրաժեշտ է՝

- պատահական փլուզումը կանխարգելելու նպատակով իրականացնել կոնստրուկցիաների ժամանակավոր կամ մշտական ամրացում կամ ուժեղացում,
- ձեռնարկել փոշեճնշման միջոցառումներ, այդ թվում խոնավեցման եղանակով,
- ձեռնարկել բարձրության վրա աշխատանքի անվտանգության միջոցառումներ,
- մշակել կառուցվածքների և սարքավորումների ապամոնտաժման ժամանակ ճոպանման սխեմաներ:

Նախապատրաստական փուլում անհրաժեշտ է իրականացնել՝

- ինժեներական ցանցերի վերատեղադրում կամ հեռացում,
- վարչական և սանիտարահիգիենիկ նշանակության շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում:

Կառուցապատման աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են մթնոլորտ արտանետումների հետ՝ փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում և դիզելային վառելիքի արտանետումներ, շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ: Օդային ավազանը աղտոտումից պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է.

-շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,

-պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,

-շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում) ունակությունը ստուգել և արագորոշել հարկանքները:



-շենքերը ծածկել համապատասխան բարձրությամբ ցանցով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով անհրաժեշտ է.

-ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

-անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը ուղղորդել պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է.

-շինարարական նյութերը տեղադրել բետոնապատ մակերեսի վրա,

-շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, տվյալ տարածքներում ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ,

-աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է.

-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

-կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

-շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

-տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

-պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները,

-բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում բարեկարգում: Շինարարական աղբը և մնացած թափոնները կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայրեր:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,

-փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,

-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,

-աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ:



Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1.490.000 դրամ:

Պարճառաքանական մաս. Փորձաքննության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարման շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ սահմանված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական նորմերի (այդ թվում արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերի) և պահանջների ապահովմանը:
2. Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը՝ խնամքը Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108Ն որոշման համապատասխան՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ:
3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝ շինհրապարակի տարածքում անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ, շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով, շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ՝ շինհրապարակի մուտի և ելքի մոտ նախատեսված հարթակում, բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների, ավելցուկային բնահողի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:



5. Կառուցման ընթացքում հաշվի առնել Կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:

6. Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

ԵՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ն.Գ.Մ.Դ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սևանի փողոց հ. 12, հ.12/1, հ.12/6 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Աննա Սարգսյան

